ճարներն (Էդի-քիլիսէ), բերդերը, ամրոց-ները եւ դղեակների աւերակների թումբերը, այն էլ հինգ-տասը կիլոմետր տարածութեան մէջ, այնքան հետաքրքրական էին, որ մինչեւ քնելը խօսակցութեան նիւթը այդ պատմական յիշատակարանների շուրջն էր: Կընքահայրս բացատրեց, թէ ամբողջ Կոլայում, Ոլթիում, Կիսկիմում եւ Արդանուչում հայեր էին ապրում. ապա Լալա (Մուսթաֆա) փաշան երեք հարիւր տարի առաջ դորանց կոտորել է. միայն իսլամը դաւանողները ազատուել են 1578 թ. կոտորածից: Դեռ մինչեւ այսօր Ճորոխի աւազանի բոլոր գիւղերում հայհոյում են Լալա-փաշային, իր կատարած այդ անգութ կոտորածի եւ կործանած տաճարների, բերդերի եւ դղեակների համար. ասաց կնքահայրս հառաչելով:

Առաւօտ վաղ Եասամալի լեռների ստորոտով բարձրացանք Եալաուզ-Զամ սարը եւ իջանք Կոլաչէն գիւղը: Երբ մտանք անտառապատ եւ այգեստաններով տարածուած Կոլաչէնի ձորը, անհուն հրճուանք զգացի շրջապատի բոյրից, դալարից, պտղալից ծառներից, գոյնզգոյն ծաղիկներից, որոնք ինձ արբեցրին անուշաբոյրով. այլեւս չկային Կարսի լերկ ապառաժները, դեղնած դաշտերը, սեւ հերկերն ու խոզանները. ամէն ինչ դմբուխտի ցոլք ունէր, ամէն քայլափոխին պէս-պէս տեսարաններ: Կոլաչէնումն էլ կար դմբէթն իջած մի աւերակ տաճար,